ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 329-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականության 2014թ. գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին
   Զեկ.Ա.Սանթրոսյան
2. Դիլիջանի քաղաքային համայնքի տարածքում ինքնակամ կառուցված շինությունը Դիլիջանի համայնքի գույքացանկում ընդգրկելու մասին
   Զեկ.Ա.Սանթրոսյան
3. Դիլիջանի Իվանովի փողոցի թիվ 32/4 հասցեի 400.0քմ հողամասն ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու մասին
   Զեկ.Ա.Սանթրոսյան
4. Դիլիջանի Կալինինի փողոցի թիվ 179/4 հասցեի ավտոտնակը և վերջինիս սպասարկման հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին
   Զեկ.Ա.Սանթրոսյան
5. Դիլիջանի Կալինինի փողոցի թիվ 179/5 հասցեի ավտոտնակը և վերջինիս սպասարկման հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին
   Զեկ.Ա.Սանթրոսյան

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

3. ՂԱՋԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

4. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

5. ՄԱՆԹԱՇՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 330-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2014Թ. ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 29 կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականության 2014թ. գույքագրման փաստաթղթերը / կցվում են/:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ՂԱՋԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
4. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՄԱՆԹԱՇՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
6. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
7. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ
8. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
9. ՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

Հաստատված է
Դիլիջան քաղաքային համայնքի ավագանու
2014թ. դեկտեմբերի 29 թիվ 330-Ա որոշմամբ

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԱՌ 01.12.2014Թ.

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	Հիմնական միջոցներ		Փոքրարժեք և արագամաշ առարկաներ	
		Անվանումների քանակը	Սկզբնական արժեքը /դրամ/	Անվանումների քանակը	Սկզբնական արժեքը /դրամ/
1	Քաղաքապետարան	897	2310250.1	46	2815.4
2	Նախադպրոցական կրթություն	188	167770.6	296	15257.8
	Այդ թվում՝				
	Դիլիջանի թիվ 1 մանկապարտեզ	24	25401.8	41	2712.1
	Դիլիջանի թիվ 2 մանկապարտեզ	41	27149.9	57	1440.1
	Դիլիջանի թիվ 3 մանկապարտեզ	33	17270.1	42	3324.9
	Դիլիջանի թիվ 4 մանկապարտեզ	41	61055.3	71	6175.1
	Դիլիջանի թիվ 5 մանկապարտեզ	20	835.7	35	832.7
	Դիլիջանի թիվ 6 մանկապարտեզ	29	36057.8	50	772.9
3	Մշակույթ	161	366500.3	56	1013.0
	Այդ թվում՝				
	Դիլիջան քաղաքի մշակութի պալատ	62	46432.3	33	783.8
	Երկրագիտական թանգարան	28	251415.4		
	Դիլիջանի մշակույթի և հանգստի մանկական զբոսայգի	34	22483.4		
	Դիլիջանի գրադարանների կենտրոնացված համակարգ	37	46169.2	23	229.2
4	Արտադպրոցական դաստիրակություն	107	133774.4	65	4980.6
	Դիլիջանի Մանկական երաժշտական դպրոց	46	81619.9	49	236.4
	Դիլիջանի Հովհ.Շարամբեյանի անվան մանկական գեղարվեստի դպրոց	44	41544.9		
	Դիլիջանի քաղաքապետարանի մարզահամալիր	17	10609.6	16	4744.2
	ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՅՆՔ	1353	2978295.5	463	24066.8

Ֆին.բաժնի պետ՝ Գ.Դավթյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 331-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ

- Դիլիջանի քաղաքային համայնքի Կալինինի փողոցի թիվ 243 հասցեի շենքին հարակից տարածքում, համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերի» 11-003-0141-0001 ծածկագրով հողում քաղ.Անահիտ Մամյանի կողմից կառուցված է ինքնակամ շինություն. մասնավորապես ավտոտնակ 49,67 քմ մակերեսով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ պարբերության պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջանի քաղաքապետարանի գույքացանկում համապատասխան հետևյալ արժեքով ընդգրկել.

- Դիլիջանի քաղաքային համայնքի Կալինինի փողոցի թիվ 243 հասցեի շենքին հարակից տարածքում, համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերի» 11-003-0141-0001 ծածկագրով հողում կառուցված ինքնակամ շինություն. մասնավորապես ավտոտնակ 49,67 քմ մակերեսով- 168878 դրամ:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ՂԱՋԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
4. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՄԱՆԹԱՇՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
6. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 332-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ԻՎԱՆՈՎԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 32/4 ՀԱՍՑԵԻ 400.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Տատյանա Նիկոլաևնա Բորիսովան՝ Դիլիջանի Իվանովի փողոցի թիվ 32/2 հասցեի, իր սեփականությունը հանդիսացող բնակելի տան 400.0քմ տնամերձ հողամասին կից գտնվող, Իվանովի փողոցի թիվ 32/4 հասցեի 400.0քմ մակերեսով հողամասն իրեն օտարելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 400.0քմ հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է "Բնակավայրերի հողերի" տարածագնահատման տասներորդ գոտում:
Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջանի Իվանովի փողոցի թիվ 32/4 հասցեի 400.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 496 800 դրամ արժեքով օտարել քաղ. Տատյանա Բորիսովային:
Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի պահանջներով՝համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Դիլիջանի Իվանովի փողոցի թիվ 32/4 հասցեի 400.0քմ հողամասն, ընդլայնման կարգով, ուղղակի վաճառքի ձևով, 496800 դրամ արժեքով, քաղ. Տատյանա Բորիսովային օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

3. ՂԱՋԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

4. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 333-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 179/4 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2014թ. դեկտեմբերի 5-ի թիվ 543-Ա որոշմամբ, քաղաքացիներ Դոնարա Չապուխյանի և Կարինե Ասատրյանի կողմից Կալինինի փողոցի թիվ 179/4 հասցեում ինքնակամ կառուցված 41.58քմ ընդհանուր արտաքին մակերեսով երկհարկանի ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է: Նշված երկհարկանի ավտոտնակը բաժանվել է երկու գույքային միավորների, մասնավորապես՝ առաջին հարկ 21.12քմ արտաքին մակերեսով, Կալինինի 179/4 հասցեով /սեփ. վկայական 25122014-11-0030/, երկրորդ հարկ 20.46քմ արտաքին մակերեսով, Կալինինի 179/5 հասցեով /սեփ. վկայական 25122014-11-0031/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Դոնարա Չապուխյանին՝ վերոհիշյալ երկհարկանի ավտոտնակի առաջին հարկը ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, վերոհիշյալ երկհարկանի ավտոտնակի առաջին հարկը՝ 21.12քմ արտաքին մակերեսով և 10.64քմ մակերեսով հողամասը (հաշվարկված է բաժնեմաս 19.2/38.11x21,12) օտարել քաղ. Դոնարա Չապուխյանին, համապատասխանաբար, 35904 դրամ և 20365 դրամ արժեքներով:
Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով՝համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Կալինինի փողոցի թիվ 179/4 հասցեի 21.12քմ արտաքին մակերեսով ավտոտնակը /երկհարկանի ավտոտնակի առաջին հարկը/ և 10.64քմ մակերեսով հողամասը (հաշվարկված է բաժնեմաս 19.2/38.11x21,12), համապատասխանաբար, 35904 դրամ և 20365 դրամ արժեքներով, քաղ. Դոնարա Չապուխյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 334-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 179/5 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2014թ. դեկտեմբերի 5-ի թիվ 543-Ա որոշմամբ, քաղաքացիներ Դոնարա Չապուխյանի և Կարինե Ասատրյանի կողմից Կալինինի փողոցի թիվ 179/4 հասցեում ինքնակամ կառուցված 41.58քմ արտաքին մակերեսով երկհարկանի ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է: Նշված երկհարկանի ավտոտնակը բաժանվել է երկու գույքային միավորների, մասնավորապես՝ առաջին հարկ 21.12քմ արտաքին մակերեսով, Կալինինի 179/4 հասցեով /սեփ. վկայական 25122014-11-0030/, երկրորդ հարկ 20.46քմ արտաքին մակերեսով, Կալինինի 179/5 հասցեով /սեփ. վկայական 25122014-11-0031/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Կարինե Ասատրյանին՝ վերոհիշյալ երկհարկանի ավտոտնակի երկրորդ հարկը ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, վերոհիշյալ երկհարկանի ավտոտնակի երկրորդ հարկը՝ 20.46քմ արտաքին մակերեսով և 10,48քմ մակերեսով հողամասը (հաշվարկված է բաժնեմաս 18.91/38.11x21,12) օտարել քաղ. Կարինե Ասատրյանին, համապատասխանաբար, 34782 դրամ և 20059դրամ արժեքներով:
Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով՝համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Կալինինի փողոցի թիվ 179/5 հասցեի 20.46քմ արտաքին մակերեսով ավտոտնակը /երկհարկանի ավտոտնակի երկրորդ հարկը/ և 10,48քմ մակերեսով հողամասը (հաշվարկված է բաժնեմաս 18.91/38.11x21,12), համապատասխանաբար, 34782 դրամ և 20059 դրամ արժեքներով, քաղ. Կարինե Ասատրյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ